ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/122

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.03.2022թ. թիվ 26/26-1/5513-2022 գրությամբ «Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ին և Ա/Ձ Սմբատ Վահագնի Մելիքյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 24.03.2022թ. թիվ 5/06.2.3/4612-2022 գրության հիման վրա, 31.03.2022թ. թիվ 26/26-1/5513-2022 գրությամբ նախաձեռնել է «Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ին և Ա/Ձ Սմբատ Վահագնի Մելիքյանին (հետայսու նաև՝ Մասնակիցներ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ի և Ա/Ձ Սմբատ Վահագնի Մելիքյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումները.</u>

«Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ի և Ա/Ձ Սմբատ Վահագնի Մելիքյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Մասնակիցները, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/122 ընթացակարգի շրջանակներում 05.04.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չեն ապահովել իրենց ներկայացուցիչների մասնակցությունը:

3. <u>ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.03.2022թ. թիվ 5/06.2.3/4612-2022 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ ներկայացնում եմ շրջակա միջավայրի նախարարության կարիքների համաև «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման 2022 թվականի աշխատանքների» ձեռքբերման նպատակով 2022 թվականի փետրվարի 4-ին հայտարարված ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01 ծածկագրով բաց մրցույթին հայտ ներկայացրած մասնակիցների՝ «Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ի «ՀՎՀՀ 00490235» և Ա/Ձ Սմբատ Վահագնի Մելիքյանի (ՀՎՀՀ 75459005) տվյալները և համապատասխան հիմքերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/122 ընթացակարգի շրջանակներում 05.04.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/122 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/122 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից կազմակերպվել է «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ն և Ա/Ձ Սմբատ Վահագնի Մելիքյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.03.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

«1. Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը կազմված է հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան, բացակայում են իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (հրավերի հավելված 1.1), հայտի ապահովումը՝ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հրավերի հավելված 3), մրցույթի փաստաթղթերի ներկայացման և ստորագրման համար լիազորողի նույնականացման քարտի պատճենները:

2. Ա/Ձ Սմբատ Վահագնի Մելիքյանի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը կազմված է հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան, բացակայում է հայտի ապահովումը կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հրավերի հավելված 3)»:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակիցներին առաջարկելով մինչև 18.03.2022թ. ժամը 17:00-ն շտկել անհամապատասխանությունները:

4. Այուհետև նույն օրը՝ ժամը 16:00-ին, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հրավիրել է արտահերթ նիստ և թիվ 3 արձանագրությամբ արձանագրել, որ «Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ի և Ա/Ձ Սմբատ Վահագնի Մելիքյանի կողմից ներկայացված հայտերում բացակայում են հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետով նախատեսված՝ մասնակցի կողմից հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշիվը և որոշում կայացրել Մասնակիցներին անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցելու մասին՝ վերջնաժամկետ սահմանելով 18.03.2022թ. ժամը 17:00-ն:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2022թ. ժամը 17:10-ին հրավիրված նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը

չեն ներկայացվել, իսկ Ա/Ձ Սմբատ Վահագնի Մելիքյանը սահմանված ժամկետում ներկայացրել է հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքի ձևով, ինչը համապատասխանում է հրավերի պահանջներին, հայտի ապահովման բնօրինակը՝ ուղեկցող գրությամբ, ինչը համապատասխանում է հրավերի պահանջներին, ինչպես նաև Ա/Ձ Սմբատ Վահագնի Մելիքյանը ներկայացրել է իր կողմից հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշիվը՝ ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին, վերջինիս կողմից ներկայացված և հրավերին կցված «Մարտունի մասնաճյուղի Մարտունի տեղամասի» և «Նորատուսի մասնաճյուղի Նորատուսի տեղամասի» ծավալաթերթերով աշխատանքների համար 2-րդ բաժինների սահմանված կշիռները շեղված են ավելի քան տասը տոկոս: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Մասնակիցների հայտերն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.03.2022թ. թիվ 26/26-1/5513-2022 գրությունը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության 24.03.2022թ. թիվ 5/06.2.3/4612-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե ***հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

(..)

Այսպես, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից կազմակերպվել է «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ն և Ա/Ձ Սմբատ Վահագնի Մելիքյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.03.2022թ. ժամը 16:00-ին հրավիրված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

«1. Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը կազմված է հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան, բացակայում են իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (հրավերի հավելված 1.1), հայտի ապահովումը՝ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հրավերի հավելված 3), մրցույթի փաստաթղթերի ներկայացման և ստորագրման համար լիազորողի նույնականացման քարտի պատճենները:

2. Ա/Ձ Սմբատ Վահագնի Մելիքյանի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը կազմված է հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան,

բացակայում է հայտի ապահովումը կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հրավերի հավելված 3)»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակիցներին առաջարկելով մինչև 18.03.2022թ. ժամը 17:00-ն շտկել անհամապատասխանությունները:

Այուհետև նույն օրը՝ ժամը 16:00-ին, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հրավիրել է արտահերթ նիստ և թիվ 3 արձանագրությամբ արձանագրել, որ «Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ի և Ա/Ձ Սմբատ Վահագնի Մելիքյանի կողմից ներկայացված հայտերում բացակայում են հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետով նախատեսված՝ մասնակցի կողմից հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշիվը և որոշում կայացրել Մասնակիցներին անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցելու մասին՝ վերջնաժամկետ սահմանելով 18.03.2022թ. ժամը 17:00-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2022թ. ժամը 17:10-ին հրավիրված նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը չեն ներկայացվել, իսկ Ա/Ձ Սմբատ Վահագնի Մելիքյանը սահմանված ժամկետում ներկայացրել է հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքի ձևով, ինչը համապատասխանում է հրավերի պահանջներին, հայտի ապահովման բնօրինակը՝ ուղեկցող գրությամբ, ինչը համապատասխանում է հրավերի պահանջներին, ինչպես նաև Ա/Ձ Սմբատ Վահագնի Մելիքյանը ներկայացրել է իր կողմից հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշիվը՝ ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին, վերջինիս կողմից ներկայացված և հրավերին կցված «Մարտունի մասնաճյուղի Մարտունի տեղամասի» և «Նորատուսի մասնաճյուղի Նորատուսի տեղամասի» ծավալաթերթերով աշխատանքների համար 2-րդ բաժինների սահմանված կշիռները շեղված են ավելի քան տասը տոկոս: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Մասնակիցների հայտերն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ***ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային*** տարվա,

ամսվա և ***ամսաթվի*** կամ ***այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից***, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ***ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:***

Մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ և 32-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված պահանջները, այն է՝ ***Կարգի 41-րդ կետի հիմքով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.03.2022թ. ժամը 16:00-ի արտահերթ նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը կասեցնելու վերաբերյալ և ծանուցել Մասնակիցներին՝ անհամապատասխանությունների շտկման համար վերջնաժամկետ սահմանելով 18.03.2022թ. մինչև 17:00-ն և 18.03.2022թ. ժամը 17:10-ի թիվ 4 արձանագրությամբ՝ մեկ աշխատանքային օրը լրացած չլինելու պայմաններում (մեկ աշխատանքային օր ժամկետը լրանում է 18.03.2022թ. ներառյալ) որոշում է կայացրել Մասնակիցների հայտերն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ, որպիսի պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ՝ մեկ աշխատանքային օրը լրացած չլինելու դեպքում հրավիրելով գնահատող հանձնաժողովի նիստ և կայացնելով Մասնակիցների հայտերն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ որոշում:***

Վերոգրյալ փաստական հանգամանքների ուժով՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից վերը շարադրված իրավական նորմերով սահմանված իմպերատիվ պահանջների խախտման արդյունքում ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Մասնակիցների և հանգեցնել վերջիններիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով

նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանը, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում հայտնել, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/28 որոշմամբ «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին պարտավորեցվել է դադարեցնել 18.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ Ա/Ձ Սմբատ Վահագնի Մելիքյանի կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ որոշումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.03.2022թ. թիվ 26/26-1/5513-2022 գրությամբ «Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ին և Ա/Ձ Սմբատ Վահագնի Մելիքյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**